«Հայոց եկեղեցու պատմություն» - 2019
11-րդ դասարան

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հոգևոր բարեպաշտական ո՞ր սովորույթն է հաստատվել Գրիգոր Լուսավորչի կողմից. (0,5 միավոր)

1) խաչակնքում
2) մոմավառություն
3) մատաղ
4) տնօրհնեք

2. Ի՞նչ անունով է ժողովուրդը մեծարել «Վեհամոր Ավետարանը» իր զորության պատճառով. (0,5 միավոր)

1) «Ամենափրկիչ»
2) «Պահապան»
3) «Ամենազոր»
4) «Հրաշագործ»

3. Ո՞ր եկեղեցին է Տավուշի թեմի առաջնորդանիստը. (0,5 միավոր)

1) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին
2) Ս. Աստվածածին եկեղեցին
3) Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին
4) Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին

4. Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ որո՞նք են եղել հայկական դրոշի գույները. (0,5 միավոր)

1) դեղին, կարմիր, կանաչ
2) կարմիր, կապույտ, դեղին
3) սպիտակ, կապույտ, դեղին
4) կապույտ, սպիտակ, կարմիր

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. ---------- ձախ ուսից վար իջնող լայն ժապավեն է. մոտիկ լինելով սրտին՝ այն խորհրդանշում է Տիրոջ լուծը սրտանց կրելու պատ-րաստակամությունը: (1 միավոր)

6. ***Ըստ պատմիչ ---------- պատմությունն ունի վեց հիմնական տարր՝ դեմք, ժամանակ, տեղ, իր, եղանակ և պատճառ:***

(1 միավոր)

7. ***---------- կաթողիկոսի կարգադրությամբ կազմված «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ» երկը հակաճառական գրականության կարևոր նմուշներից է:***

(1 միավոր)

8. ***Բյուզանդագետ ---------- այսպես է բնութագրել X դարի իրավիճակը. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ X դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»:***

(1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

9. ***Մշակույթի գործչի անունը համապատասխանեցնել իր խոսքերին.***

(1 միավոր)

1. *Սենեկա*
2. *Իմանուիլ Կանտ*
3. *Վիլյամ Շեքսպիր*
4. *Վիլյամ Սարոյան*
5. *Լեոնարդո դա Վինչի*
6. *Նաղաշ Հովնաթան*

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Մի փոքր կռանալուց մի վախենա, հետո ավելի ուղիղ կկանգնես:
բ) Մեղք է և հեշտ գործել չարիք,
Վարձք է դժվար՝ գործել բարիք:
գ) Ով առաքինություն է ցանում, փառք է հնձում:
դ) Բարին երբեք չի մահանում: Եթե մահանար, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի:
ե) Առաքինությունից ավելի հարուստ ժառանգություն չկա:
զ) Սկզբում բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաջինի չի կարող լինել երկրորդը:
է) Բարոյական լինելու համար խելամտությունը շատ քիչ է:

10. Հայոց կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իր հետ կապ ունեցող իրադարձությանը.

(1 միավոր)

1. *Գևորգ Բ Գառնեցի*
2. *Բարսեղ Ա Անեցի*
3. *Գրիգոր Գ Պահլավունի*
4. *Հովհաննես Ե Դրասխանակերտցի*
5. *Պետրոս Ա Գետադարձ*
6. *Խաչիկ Ա Արշարունի*

1	
2	
3	
4	
5	
6	

ա) Բջնիի և Ամբերդի եպիսկոպոսական աթոռների հիմնումը
բ) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Հռոմկլա
գ) Պետական անկախության վերականգնումը Հայաստանում
դ) Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովի հրավիրումը
ե) Նրա և սելջուկյան տերության ղեկավար Մելիք Ա շահի հանդիպման արդյունքում Հայաստանից գանձվող հարկերի թեթևանալը և եկեղեցու վիճակի բարելավվելը
զ) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումն Աղթամար
է) Անտիոքում և Կիլիկիայի Տարսոն քաղաքում հայկական թեմերի հիմնումը

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

11. Հայ նշանավոր հոգևոր գործիչների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

(1 միավոր)

ա) Ս. Գրիգոր Նարեկացի
բ) Դավիթ Անհաղթ
գ) Ս. Գրիգոր Տաթևացի
դ) Ս. Հովհաննես Գ Օձնեցի
ե) Մկրտիչ Ե Խրիմյան
զ) Ս. Մովսես Տաթևացի
է) Եզնիկ Կողբացի
ը) Ս. Ներսես Շնորհալի
թ) Անանիա Շիրակացի

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. «Պատմությունը պետք է ունենա անհատի, մարդու և ժողովրդի վարքին ուղղություն տալու նպատակ»:

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: (1 միավոր)

_____

13. «Եկեք ոտքի՛ ելնենք, զգաստանանք ու փրկագործենք բերկրալի Արարատյան դրախտը մեր եղեմակերտ»:

1. Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)

_____

2. Ո՞ր երկասիրությունից է մեջբերված հատվածը: (1 միավոր)

_____

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանք

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

հրեշտակ, առյուծ, վարազ, եզ, արծիվ

_____

_____

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

Անի, Դվին, Էջմիածին, Արմավիր, Կարս, Սիս

_____

_____

15/1. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել տվյալ շարքին համապատասխանող ևս մեկ անվանում: (1 միավոր)

ա. Ծաղկազարդ, Սուրբ Սարգիս, …
բ. Ավետում, Տյառնընդառաջ …
գ. Սուրբ Վարդանանց տոն, Վարագա Սուրբ խաչի տոն …

_____

_____

15/2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (1 միավոր)

ա. Ստեփանոս Ե Սալմաստեցի, Միքայել Սեբաստացի, Հակոբ Դ Ջուղայեցի
բ. Հակոբ Դ Ջուղայեցի Ղուկաս Ա Կարնեցի, Եփրեմ Ա Ձորագեղցի
գ. Կիրակոս Ա Վիրապեցի, Ստեփանոս Ե Սալմաստեցի, Սիմեոն Ա Երևանցի

_____

_____

15/3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել տվյալ շարքին համապատասխանող ևս մեկ անվանում: (1 միավոր)

ա. Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Ճաշու երրորդ ժամ, Ճաշու վեցերորդ ժամ, Ճաշու իններորդ ժամ, Երեկոյան, Խաղաղական, …
բ. Գիշերային, Առավոտյան, Կեսօրի, Ճաշու առաջին ժամ, Ճաշու երկրորդ ժամ, Ճաշու երրորդ ժամ, Երեկոյան, Կեսգիշերային, …
գ. Գիշերային, Առավոտյան, Ցերեկային, Ճաշու երրորդ ժամ, Ճաշու վեցերորդ ժամ, Ճաշու իններորդ ժամ, Երեկոյան, Գիշերամուտի, …

_____

_____

№ 16

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից

(յուրաքանչյուր հարցին՝ 0,25 միավոր)

(0,25 X 8 = 2 միավոր)

16. *ա. Ովքե՞ր են պատկերված:*

բ. Գրել նրանց աշխատությունների անվանումները:



1.

2.

3

4

1. ա_____ բ_____

2. ա_____ բ_____

3. ա_____ բ_____

4. ա_____ բ_____

17· *Շարադրանք (2 միավոր)*

1. Ի՞նչ է պատարագը, ո՞րն է պատարագի խորհուրդը: Ներկայացրե՛ք մեր պատարագի մասերը:
2. Ի՞նչ դրսևորումներ ունի Հայոց եկեղեցու յոթ առաքինություններից մեծագույնը՝ խոնարհությունը: Ներկայացրեք այդ դրսևորումները:
3. Ի՞նչ է տնօրինեքը: Ե՞րբ և ինչպե՞ս է կատարվում տնօրինեքի արարողությունը:
4. Ներկայացրեք հայ ընտանիքը որպես արժեք: